

որ ձեզ կը լուսանային Իւր սուրբ Բանի մէջ: Ոչ
Լիւտեբեր, ոչ Կալուէնը լրել չեն ըմբռնել Տէր
Աստուծոյ խօսքերը խմատար: Նոր հանգամանքներն
ուսուցանում են նոր պարտականութիւններն. ա-
ռաջուայ բարին ու լաւը՝ ժամանակով անտեղի
է դառնում: Ով որ չի ուզում հշմարտութիւնից
յետ մնալ, պէտք է մեշտ ձգտէ յառաջ և դէ-
պի վեր:

Ազգերը պէտք է սովորեն ուղիղ հասկանալ
իրանց իրաւունքը: Երկուհարիւր յիսուն տարի ա-
ռաջ Պիտեր Բերկլէյնն ասել է մի բռնւած վտարան-
դեալներին. «Ամենայն ազգ որ և է առաւելութիւն
է ուզում ոտանալ: Մեզ ուրիշ ինչ առաւելու-
թիւն է մնում, քան սրբութիւնը: Թուով գե-
րազանցել չենք կարող, մենք քիչուոր ենք: Ոյժը
մեր կողմը չէ, մենք ամենատարեւել ենք. իսկ հա-
րսաստութեան դալով, աշխարհի ազգերի մէջ մե-
զանց աւելի աղքատը չկայ: Ոչ թէ դերազանցել
ուրիշներէն, նոյն իսկ նոցա հաւասարութիւն չենք
կարող, և եթէ մեր հաւատքը և աղագրութիւնը
քիչ լինի, ազգերի մէջ մենք կը լինինք ամենա-
մերժալը: Ուրեմն կատարելագործութիւնը, և թող
կատարելագործութիւնը լինի մեր պատկը յա-
ւիտեանս:

Սաղայն այն ժամանակից ի վեր ինչպէս ա-
մենայն ինչ փոխուել է: Թուով դուք շատ բազ-
մացել էք: Ուժով ամենագորաւոր և ամենահա-
րուստ էք երկրագնդի քրիստոնէայ ազգերի մէջ:
Դուք ըստ ամենայնի դերազանց էք միւս ազգե-
րէն: Ինչո՞ւ. կարծում եմ, առաւելապէս այն
պատճառով, որ ձեր նախահայրերը երկեւզած
էին:

Թիթէ Ամերիկան սերտ կուսնենայ արհամար-
հել այն աստիճանները, որով բարձրացել է մինչև
իւր մեծութիւնը: Չեմ հաւատում, նա իւր նախ-
կին արդարամտութեան փոխարէն չի ընտրի մահ
և դժոխք: Նա չի թողնի, որ խաթամութի աղա-
ղակներով և աղմուկներով խաւան սակաւթիւ
բարի և իմաստուն ձայները: Նա կը լսի երեք
մեծ հրեշտակներին—պատմութեան, խղճին և
փորձառութեան:

Աստուծոյ օգնութեամբ, դուք մեզ հետ և
մենք ձեզ հետ, ամէն կերպ կաշխատենք նորոգել
մեզ և մեզ հետ ի միասին մարդկութիւնը: Այն
ժամանակ անձնապաշտութիւնը մահացու հար-
ուած կը ստանայ և անցեալ շարիքները միայն
պատմութեան յիշատակարաններում կը մնան,
մեշտ օտարու ազդելով, թէ աւանդ երբեմն
գործա իշխող են եղել:

Ս. Մ.

ՄԻ ՀԱՐՆԻԱՆՑԻ ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆ.

«Արարատ»-ի նախորդ համարում ներդ. Գ.
Տէր Մկրտչեան հրատարակելով «Ակադեմիկն
սրբոյն Գրեգորի պարսկէ» պատմական յիշատա-
կարանը՝ իւր յօդուածի մէջ բերել էր երկու հա-
տուած Ներսէս Բ. Աշտարակեցի կաթողիկոսի
թղթերից, Հ. Ալիշանի «Այրարատ»-ից առնելով:
«Արարատ»-ի սրբազրոյցը իւր կողմէն ծանօթութիւն
էր աւելացրել, որ այդ թղթերն արդէն ամբողջու-
թեամբ լոյս են տեսել: Ազգիկոսն Յանձնաժողովի
«Գիրք թղթոց» հրատարակութեան մէջ: Երեւի նա
չէր մտաբերում, որ նոյն թղթերից կարեորագոյնն
ու թէ Շն. Գ. Տէր Մկրտչեանին հարկաւոր եղած
և թէ իւր աւելացրած բոլոր տեղեկութիւնները
պարունակողը լոյս էր տեսել անցեալ տարի
«Արարատ»-ի մէջ*. բայց միթէ չէր մտաբերում
նաև «Արարատ»-ի մշտական աշխատակից Շն. Գ.
Տէր Մկրտչեան, որի մի ուրիշ յօդուածը կողմ-
նակի կերպով առիթ էր եղել նոյն թղթի հրա-
տարակութեան: Աստուծոյն օգնութեամբ, որ այդ թուոյ-
թը հրատարակելին մենք չգիտէինք, թէ նորա մի
քանի տողերը ապուած են արդէն «Այրարատ»-ի
մէջ. ո՞ւմ մարկը կանցնէր, թէ այնպիսի յայտնի
իրողութեան համար, ինչպէս է Ազատ դեալի
հովտի կամ Գեառնիբասարի ամբողջ ժողովուր-
դի հետ նաև մի քանի սուր ասորիների մեր
դարու սկզբներին Պարսկաստանից դադարած ու
հին Գուլի համարուող տեղում բնակութիւն
հաստատած լինելը,—Հ. Ալիշան խոր հնութեան
մէջ հետքեր կորոնէր և այն անմեղ փաստը դը-
տած կլինէր, որ Զ. դարու կիսին Ներսէս Բ.
Գուլիում ժողով է դուրսբեր և խուժիկ նեատու-
րականներին հալածելու վճիռ տուել: Իսկ ներդ. Գ.
Տ. Մկրտչեանին յայտնի է եղել այդ: Ի՞նչպէս
կարող էր ուրեմն «Արարատ»-ի մէջ լոյս տեսած
ամբողջ թուոյթը իրեն կից յօդուածով փախչել
նորա պէս հմուտ և մանրաբնի բանասէրի աչ-
քից: Սաղայն քանի որ մեր կարծիքով գիտական
ուսումնասիրութեան համար բացի անգիտու-
թիւնից ուրիշ մէջ մի պատճառ չի կարող լինել
եղելութիւնը ծածկելու՝ պարտք համարեցինք
յիշել այստեղ այդ պարզ եղելութիւնը:

Թող ներսի մեզ ասա՛ Շնորհ. Գ. Տէր
Մկրտչեանի յօդուածի մասին մի անգամ խօսե-
լուց յետոյ, մի կէտի վերայ ևս ուշադրու-
թիւն գործնել: Նա՛ գուցէ Հ. Ալիշանին հե-
տեւելով, ընդունում է առանց այլևայլու-
թեան, թէ Գրեգոր Ռափիկ անուան նուիրած
վանքը Գուլիում է եղել, մինչդեռ Ներսէս Բ.-ի

թղթերն և իւր գործ դրած միւս աղբիւրներն մէջ չկայ մէ մի ցուցումն այդ մասին: Որ եկեալ բնակեցան յաշխարհիս մերում պատճառաւ վաճառաշահութեան» և «Յորոց ոմանք հասեալ յառաջագոյն յաշխարհ մեր... արարին իմն շինած յանուն Վանանդիի Ռաթիկ» խօսքերից կարելի է ընդհանրապէս աւելի շուտ եղբակացնել, որ գրողներն աչքն առաջ, մայրաքաղաքում, չի եղել այդ վանքը:— Դու ինչում յերաւի միս. Գրեգորի եկեղեցի կար, բայց այդ ս, Գրեգորը մեր Լուսաւորին է և եկեղեցին այն «Կաթուղիկէն», որի հովանու ներքոյ գտնուում էր Ն. դարու երկրորդ կեսից ի վեր հայոց կաթուղիկոսարանը և որի մէջ 654—5 թ. ին գումարուեցաւ Գրեգոր Ռաթիկ վանքն աւերող ժողովը: Այդ եկեղեցին Քովմա Արծրունու, Յովհան պատմագրի ու Վարդան պատմի տեսելով Վամիկոնեան Մեծ Վարդանն է կառուցել իւր ընկեր նախարարներն հետ, և Գիւտ կաթուղիկոսին ու հայրապետական աթոռը Դուին փոխադրել: Բայց նորա պատմածի մէջ ակնկերն շինութիւն կայ այն պատմական ատոյգ ղէպքի հետ, որ Վարդան Բ. Վամիկոնեան 571 թ. ին ապստամբեց պարսիկներից և, ինչպէս Ալեքէոս պատմում է, «Ազանեալ զՍուրէն մարդպան յանկարծաւրէն ի Գրեկն քաղաքի, առին դաւար բազում, և գնացին ի ծառայութիւն Յունաց»: Ապա երբ նա Յունաց զօրքի հետ գալիս, Դուինը պաշարում ու կործանում են, և պարսիկներին հալածում» ի մէջի ալլոց և «Ղեկեղեցի սրբոյն Գրեգորի, որ շինեալ էր մերձ ի քաղաքն, էին արարեալ համբարանոցս պարսիկն՝ հարին հուր և այրեցին. վասն որոյ եղե նոցա խաւովութիւն մեծ»: Ս. Գրեգորի եկեղեցին այդպէս այրուած մնաց մինչև Դուինի Գ. ժողովը (607 թ.), երբ Սմբատ Բագրատունի Վրդանայ մարդկանք հայրենիք գալով և Աբրահամ Արշտունի կաթուղիկոս ընտրել չալով՝ հրաման ստացաւ Խոսրով Ապրուէղից շինելու նաև այդ եկեղեցին, հակառակ տեղական իշխանութեան ընդդիմութեանը, որ բերդին շատ մօտ լինելուն համար՝ ապամոկան տեսակէտից անյարմար էր գտնում նորա շինութիւնը: Ամենայն հաւանականութեամբ այս, և ո՛չ Վաղարշապատի «Զուարթնոց», եկեղեցուն է վերաբերում նաև պ. Կոստանեանի յառաջ բերած յիշատակարանի այն տեղեկութիւնը, թէ—ներսէս Գ. Բիւզանդիոյ Կոստանդ կայսեր ծախքով շինեց «գրադմոպոլիս» փարսիս բանաւոր հօտից ի Բագրաւորաշտի ի սուրբն Գրեգոր»*: Բարդէն Կաթուղիկոսի թղթերը հրատարակելով մենք ցոյց էինք տուել, որ նորա գումարած ժողովը Դուինում է

եղել, և ո՛չ Վաղարշապատում. իսկ մեր մի քանի հին յիշատակարաններն մէջ նոյն ժողովի գումարման տեղ նշանակած է Քաղաւաղաքը, որ մեր կարծիքով սխալմամբ է յետին դարերում Վաղարշապատ հանկացուել և, ինչպէս այնտեղ, այնպէս և այստեղ Դուինի համար ստուած պէտք է ընդունել: Արդէն վերելի յիշատակարանի խօսքն ևս, որի ծագման մասին պ. Կոստանեան ունի չի յիշել զԲագրատաւար, ըստ երևութիւն արդէն եղած եկեղեցու վերայ մի նոր մաս աւելացնելու մասին է, և ո՛չ նորը կառուցանելու: Ներսէս Գ. բացի Զուարթնոց եկեղեցուց ուրիշ շինութիւններ ևս պէտք է արած լինի, ինչպէս և յիշուում է,—որ Շինող է կոչուել, և Զուարթնոց եկեղեցու շինութիւնը նա Կոստանդ կայսեր հետ տեսնուելուց առաջ էր սկսել: Իսկ թէ Դուինի ս. Գրեգորն առաջին անգամ մի վերաբերել՝ վերև բերուած պատմիչներն անդեհալի թիւններով որոշել զԺուար է: Յայտնի է, որ Մեծն Վարդանի մահից տարիներ յետոյ է Գիւտ կաթուղիկոս դարձել. եթէ առաջինը մի մարդպան սպանած լինէր՝ առանց յիշատակութեան չէր մնայ ժամանակակիցների կողմից, և այդ պէտք է եղած լինէր ապստամբութեան միջոցին, երբ եկեղեցի շինելու հար չկար այլ ևս: Միակ պատմական ճշմարտութիւնն այս բոլորի մէջ այն է, որ յերաւի Գիւտից սկսած մեր կաթուղիկոսների աթոռանիստ ներկայանում է Դուինը. ուրեմն անհաւանական չէ, որ նորա օրով և կառուցուել է Դուինի մայր եկեղեցին: Դադար Փարպեցու յիշատակութիւններից կարելի է եղբակացնել, որ այս ժամանակ և շարժական են դարձել ս. Լուսաւորչի նշխարները: Ս. Սահակի մահով Լուսաւորչի տոհմը վերջացաւ. զուր տեղը չէ, որ նորանից յետոյ կաթուղիկոսական իշխանութիւն վարող ս. Մեսրոպ և ս. Յովսէփ տեղապահ անուամբ են մնացել, տոհմական հայրապետութեան իրաւունքն այնչափ հաստատ էր Հայոց մէջ, որ ինչպէս նոյն Փարպեցու յիշատակութիւնը* եղբակացնել կարելի է՝ նորա կամեցան կրկին կաթուղիկոսներ ստանալ Լուսաւորչից յետոյ երկրորդ անգ ըսնող Աղբիւնոսի տոհմից (Մելիսէ և Մովսէս), և ապա այդ տոհմական իրաւունքը վերացաւ ու Գիւտ եղաւ առաջին իսկապէս ընտրեալ կաթուղիկոսը: Անհաւանական չէ, որ արդէն սուրբերի կարգն անցած Լուսաւորչի հետ զաղափարական կապ պահպանելու համար Գիւտի ժամանակից սկսեցին Հայոց կաթուղիկոսներն իրենց մօտ պահել ս. Լուսաւորչի նշխարները, և այդ նշխարները զրուեցան առաջին անգամ այն եկեղեցու հիմքում, որ ս. Գրեգոր կոչուելով պէտք

* Ս. Լուսաւորչի արք. 1896, եր. 26:

* Պատմաբան. Վենեթի, 1891, եր. 376:

է այնուհետեւ հայրազգեական մայր եկեղեցի՝ «կաթուղիէ» լինէր:—Յամենայն դէպս, կրկնում ենք, այս ս. Գրիգորն էր Գուրին եկեղեցին, մինչ Գրիգոր Ռաֆիկ վանքը Գուրնում կառուցած լինելուն մէջ մի փաստ չկայ:

Ծնորհ. Գ. Տէր Մկրտչեանի յոգուածի մէջ մի ուրիշ կէտ ևս մեր աչքին ընկաւ, որ չէմք կամենայ առանց յիշատակութեան թողնել: Նա—հապիւթանի ժողովի Բ. կանոնը յատաճ բերելով՝ նա ազատեցանում է, թէ Ե. և Զ. դարերում քրիստոնեաները «խզճի ազատութեան մասին նոյն գաղափարն ունէին», ինչ որ պարսիկները: Բայց մենք կարծում ենք, որ այդպիսի մոգեռն գաղափարներ, ինչպէս է «խզճի ազատութեան» գաղափարը՝ Ե. դար փոխադրելը միայն մարերի շիւթութիւն և թիւրիմացութիւններ պատճառել կարող է: Մեր ժամանակի մարդիկ և ազգութիւններ յերաւել շատ աւելի ընդարձակ չափով խզճի ազատութիւն են ընդունում կրօնական խնդիրներում, քան նախկին դարերում ընդունել կարող էին: Բայց դորա գլխաւոր պատճառը լուսաւորութիւնը չէ, և մէջ մանաւանդ «աւետարանական ոգու» զորանալը մեր մէջ, այլ այն, որ կրօնը նոցա համար անտարբեր քան է դարձել. այն խնդիրներում, որոնք նոյնքան մօտ են նոցա որովհետեւ, որքան մօտ էր կրօնը Ե. և Զ. դարում մարդոց սրտերին՝ նոցա պակաս անաղատ չեն խզով, քան վերջիններս:—Թէ Շահապիւթանի ժողովը պատուիրում է քարկոծել ու բազմաթիւ մէկ որ այդպիսի ժողովների կանոնները փոխ էին առնում սովորաբար ուրիշները և տարբեր կերպով էին դործադրում, քան զրում էին. և միւս՝ մէջ մի քրիստոնեայ Ե. դարում խզճի ազատութեամբ չէր ուրանում իւր հաւատը, այլ սնտաի երկիւղի կամ անօրէն ցանկութիւնները ճշման ներքոյ. այնպէս որ նորան քարկոծելը խզճի ազատութեան բռնաբարում չէր լինի, այլ որբաղան ոգևորութեան և նախնախնորութեան արդիւնք. մանաւանդ քարկոծողներն իրենք զօրեղ իշխանութիւն չէին, ինչպէս էին Զ. դարի պարսիկները, այլ պէտք է դործէին տերղ իշխանութեան դէմ, պատժի երկիւղով:—Իսկ թէ «աւետարանի ոգին» որչափ կենդանի էր Ե. դարում Հայոց մէջ՝ դորա վիշակահանները ուրիշ անդ պէտք է որոնել: Այսպիսի մի վիշակահան է օրինակ Արաշատի ժողովի պարսիկներին դրած թուղթը, որի նման զուտ աւետարանական ոգւով զրուածք քիչ կլինի ընդհանուր եկեղեցւոյ պատմութեան մէջ և որով մենք աւելի արթննալ կարող ենք, քան Հայ աղգի անցեալ ու ներկայ հոգեւոր կեանքի ուրիշ որ և է արտադրութեամբ:

Գ. Ա.



Հայր Դեանդ Ալիշան. — Նոյեմբեր 9 լուսադէմին Վենետիկի ս. Ղազարու վանքում իւր մահկանացուն կնքեց թխուն և մէկ ամեայ հասակի մէջ Միխիթարեան Միաբանութեան ամենապատկառելի անդամը, մեր ժամանակի հայ գրականութեան ամենախառակաւոր մշակը՝ Հ. Գ. Ալիշան: Նա համեմատաբար քիչ է յայտնի այն ժողովրդին, որի համար աշխատել է անդադար իւր երկարատե և բեղուն կեանքի ամբողջ ընթացքում. նորա մեծահասուր պատմագիտական — աշխարհագիտական երկասիրութիւնները մատչելի են միայն սակաւթիւ բանասէրների և դպրոցականների. աւելի ընդարձակ շրջաններում՝ մուտք է դործել նա իրրե բանաստեղծ, բայց ոչ իւր բոլոր բանաստեղծական գրուածներով, որոնց մեծ մասը ընդհանուրին դժուար ըմբռնելի գրաբար լեզուով է, և ոչ իսկ «Նահապետի» տառնեակ աշխարհաբար երգերով, այլ սուցանից հանած մի քանի համառօտ նուագներով և իմաստալից հայրենասիրական խօսքերով: Այնուամենայնիւ Հ. Ալիշան թէ իրրե բանաստեղծ, թէ իրրե գիտուն մի քանի սերունդ է կրթել՝ «հայրենեաց հողն ու ջուր» ճանաչել ու սիրել սովորեցնելով, և դժուար է չափել, թէ որքան մեծ ու ընդարձակ է եղել նորա դաստիարակական ազդեցութիւնն այդ կողմից, և կլինի դեռ երկար ժամանակ Հ. Ալիշան գրական դործիչ էր գրեթէ մանկութիւնից ի վեր, և նորա ողջ գործունէութեան կենտրոնը, ոգին ու նիւթը եղել է հայ հայրենիք. հայրենիքն իւր անցեալ վատքով, իւր քաղաքական և հոգեւոր կեանքի մէջ ապարեզ հանած հերոսներով, իւր շինուածներովն ու աւերակներով, իւր բնութեան ճոխութիւններով և իւր բնակչաց առաքինութիւններովն ու թերութիւններով՝ իւր չարաբաստիկ ներկայովն ու յուսատու ապագայով—անցել է նորա գրչի տակից այնպէս, որ շատ անգամ դժուար է որոշել, թէ ուր ոգեւունչ բանաստեղծն է խօսում և ուր հետաքննի պատմագէտն ու աշխարհագէտը. Հայաստանի հին ու նոր